Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

19 հուլիսի 2012 թվականի N 29

---

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հավանություն տալ՝

1) Հայաստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարությանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարությունից բխող առաջնահերթ ու միջնաժամկետ միջոցառումներին՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հուլիսի 31-ի N 650-Ա որոշման 1-ին կետով ստեղծված հանձնաժողովում (այսուհետ՝ հանձնաժողով) ընդգրկված պետական կառավարման մարմինների ղեկավարներին և առաջարկել տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական, գիտական ու կրթական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն ռազմավարությունից բխող միջոցառումների կատարման, ինչպես նաև կոնվենցիայի իրագործման ուղղությամբ ձեռնարկված գործողությունների մասին:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա երրորդ տասնօրյակում՝

1) ամփոփել սույն որոշման 2-րդ կետում նշված տեղեկատվությունը, քննարկել հանձնաժողովի նիստում և ներառել Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիայի իրագործման վերաբերյալ զեկույցներում.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել հաշվետվություն սույն կետի 1-ին ենթակետում նշված միջոցառումների կատարման ընթացքի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. հուլիսի 24
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թ.
հուլիսի 19-ի նիստի N 29
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ Ի. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Ներածություն

1) Վերջին տասնամյակներում արձանագրվող գերուրբանիզացիայի համաշխարհային միտումներն ու քաղաքային բնակչության կտրուկ աճը, արդյունաբերության, էներգետիկայի, ընդերքօգտագործման, տրանսպորտի, քաղաքաշինության առաջընթաց զարգացումները, աստիճանաբար ավելացնելով շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն (մարդածին) ճնշումները՝ առաջացրել են այնպիսի գլոբալ մարտահրավերներ, ինչպիսիք են բնական ռեսուրսների սպառման վտանգը, էկոլոգիայի վատթարացումը, կլիմայի փոփոխությունները, լայնամասշտաբ բնական և տեխնածին աղետները, կենդանական և բուսական աշխարհի վերափոխումները.

2) առկա մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությունը ձևավորեց մարդկության առջև ծառացած համընդհանուր նպատակ՝ <<ապահովել կայուն զարգացումը երկրագնդի վրա>>. այն է՝ տնտեսական, սոցիալական, տարածական և ցանկացած այլ զարգացումները՝ ապահովելով ներկա սերնդի կարիքները, պետք է պահպանեն բավարար չափով ռեսուրսներ նաև գալիք սերունդների համար.

3) Եվրոպայի Խորհրդի կողմից ընդունվեց <<Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան>> (այսուհետև՝ Կոնվենցիա), որը <<կայուն զարգացման>> գաղափարի շրջանակներում ներկայացավ որպես լանդշաֆտներին վերաբերող <<նոր փիլիսոփայություն>>: Կոնվենցիան հիմնվեց այն պարզ գաղափարի վրա, որ մարդու կյանքի որակն ուղղակի կախվածության մեջ է նրան շրջապատող միջավայրի որակից և, հետևաբար, կարևոր են ոչ միայն արժեքավոր բնական և մշակութային լանդշաֆտները, այլ նաև առօրյա միջավայրը, լքված և դեգրադացված տարածքները.

4) նոր գաղափարախոսության հիմքում դրվեց նաև այն օրինաչափությունը, որ լանդշաֆտներն են, որ ձևավորում են երկրի ինքնատիպ պատկերը, արտահայտում բնակվող մարդկանց արժեքային համակարգը, ինչպես նաև խթանում կամ արգելակում են տնտեսական զարգացումը.

5) Կոնվենցիան կենտրոնացնում է ուշադրությունը տարածքի՝ որպես ամբողջության վրա, առանց տարանջատելու այն ըստ քաղաքային, քաղաքամերձ, գյուղական և բնական հատվածների: Լանդշաֆտը չի գնահատվում որպես մշակութային, արհեստական և բնական առանձին տարրերի պարզ համախումբ. հակառակը՝ այն դիտարկվում է որպես մեկ ամբողջություն, որի բաղադրիչ մասերն իմաստավորվում են միասնականորեն՝ իրենց փոխշաղկապվածության մեջ.

6) լանդշաֆտը ճանաչվում է որպես հանրության և անհատական բարեկեցության (ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական և ինտելեկտուալ իմաստով) նախապայման, ինչպես նաև կայուն զարգացմանն ու տնտեսական գործունեությանը նպաստող ռեսուրս:

2. Ընդհանուր դրույթներ

1) Կոնվենցիայի փիլիսոփայության ներքո ձևակերպվեցին մի շարք նոր հասկացություններ, որոնք պետք է դրվեն լանդշաֆտային քաղաքականությունների և ռազմավարությունների

հիմքում: <<Լանդշաֆտ>> հասկացությունն ընդլայնեց իր շրջանակները և ձևակերպվեց որպես <<մարդու կողմից ընկալվող տարածք, որի բնույթը՝ բնական և մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք է>>.

2) որակի և առանձնահատկությունների տեսանկյունից մարդուն շրջապատող լանդշաֆտները դասակարգվեցին որպես յուրահատուկ (արժեքավոր), սովորական (առօրյա) և դեգրադացված (լքված)՝ համաձայն գծապատկերի: Լանդշաֆտային գործողությունները (պահպանություն, կառավարում, պլանավորում) փոխլրացնող են և որոշակի բնութագիր ունեցող լանդշաֆտի նկատմամբ կարող են կիրառվել տարբեր համամասնությամբ.

3) Հայաստանը ճանաչելի է աշխարհում իր բիբլիական բնապատկերներով՝ գեղեցիկ ուրվագծեր ունեցով բարձր լեռնաշղթաներով, խորը ձորերով, հարթավայրերով հոսող գետերով, դաշտավայրերում մշակվող խաղողի և մրգատու այգիներով, մարգագետնային և տափաստանային բուսականությամբ.

4) Հայ ժողովրդի հոգևոր և արժեքային համակարգին բնորոշ է լանդշաֆտի նկատմամբ զգայունությունը: Դրա վկայություններից է, օրինակ՝ Արարատ լեռը երկրի խորհրդանիշների շարքին դասելը: Բնության և մարդկային ստեղծագործության ներդաշնակության կատարյալ նմուշներ են հայկական պատմաճարտարապետական հուշարձանները.

5) միևնույն ժամանակ, հաշվի առնելով երկրի անհամամասնական տարածքային զարգացումը՝ ինտենսիվ և էքստենսիվ յուրացված տարածքները բնութագրող ցուցանիշների խիստ տարբերությամբ, բնակեցման և գյուղատնտեսության համար նպաստավոր տարածքների սահմանափակ լինելը, մայրաքաղաքի գերծանրաբեռնվածությունը՝ երկիրն իդենտիֆիկացնող լանդշաֆտային բնութագրերի պահպանումն ու բարելավումը ներկայանում է որպես հրամայական պահանջ.

6) Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կոնվենցիան ՀՀ Ազգային ժողովի 2004 թվականի մարտի 9-ի որոշմամբ՝ սկիզբ դնելով Հայաստանում բնական և ձեռակերտ լանդշաֆտների պահպանության, կառավարման և պլանավորման գործընթացի իրականացմանը և, ի թիվս Եվրոպայի Խորհրդի 37 անդամ երկրների՝ պարտավորվելով իրագործել Կոնվենցիայով սահմանված դրույթները:

3. Կոնվենցիայի իրագործման ընթացքը Հայաստանում

1) Վերջին տարիների ընթացքում Հայաստանում իրականացվել են մի շարք հետևողական քայլեր՝ ուղղված լանդշաֆտային խնդիրների բացահայտմանը, վերլուծությանը և ազգային քաղաքականության հիմքերի ստեղծմանը: Փուլային քայլերն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերով: Միջազգային համագործակցության շրջանակներում կազմակերպվել են տարածական պլանավորման և լանդշաֆտային խնդիրների քննարկմանը նվիրված համաժողովներ, որոնք օգտակար են փորձի փոխանակման, ինչպես նաև լանդշաֆտների հանդեպ մասնագետների և հասարակության ուշադրությունը բևեռելու առումով.

2) 2004-2011 թվականների ընթացքում Կոնվենցիայի իրագործման շրջանակներում ընդունված իրավական ակտերի ժամանակացույցը վկայում է այն կարևոր ուղղությունների մասին, որոնք դրվելու են առաջարկվող՝ Հայաստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարության (այսուհետ՝ լանդշաֆտային ռազմավարություն) և դրանից բխող առաջնահերթ ու միջնաժամկետ միջոցառումների հիմքում.

ա. ՀՀ Ազգային ժողովի 2004 թվականի փետրվարի 18-ի «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան վավերացնելու մասին» ՆԼ-070-3 որոշումը,

բ. ՀՀ վարչապետի 2009 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրագործման

աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծվելու մասին» N650-Ա որոշումը,

գ. ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման 2011-2012 թվականների իջոցառումների ցանկը հաստատելու մասին» N308-Ն որոշումը,

դ. ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի N45 նիստի «Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթներին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը.

ե. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հուլիսի 31-ի N 657-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 952-Ա որոշումը, որով լանդշաֆտային հիմնախնդիրների ներառման նպատակով լրացումներ են կատարվել քաղաքացիական ծառայության վերապատրաստման դասընթացներում: Համապատասխան քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում լրացվել է Կոնվենցիայի իմացության վերաբերյալ պահանջը.

զ. ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակ սահմանելու մասին» N164-Ն որոշումը:

4. Օրենսդրական կարգավորում

1) Հարկ է նշել, որ բնական և մշակութային լանդշաֆտներին առնչվող բազմաթիվ խնդիրներ ամրագրված են երկրում գործող հիմնարար օրենսդրությամբ: Մասնավորապես, բնական ռեսուրսների օգտագործման սկզբունքները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգիրքով>>, Հայաստանի Հանրապետության <<Ջրային օրենսգիրքով>>, Հայաստանի Հանրապետության <<Անտառային օրենսգրքով>>, այլ օրենքներով և իրավական ակտերով.
2) քաղաքաշինության ոլորտը կարգավորվում է <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, որով ամրագրված է պարտադիր մշակման ենթակա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի եռաստիճան դասակարգումն ըստ ազգային, ռեգիոնալ և տեղական մակարդակների: Այն դեպքերի համար, երբ տարածքների կառուցապատումը, հատակագծումը, օգտագործումը, քաղաքացիների, հասարակության, պետության շահերի ապահովումն առանց օրենսդրական լրացուցիչ լուծումների դժվար է կամ անարդյունավետ, նախատեսված է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման մեխանիզմների կիրառումը.
3) բնության առանձնահատուկ արժեք ներկայացնող տարածքների պահպանության վերաբերյալ դրույթները և բնապահպանական խնդիրների կարգավորումն ամրագրված են <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով: Պատմամշակութային անշարժ հուշարձանների տարածքների պահպանությունը, հուշարձանների պահպանական գոտիներում քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը՝ <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>>, <<Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանցից բխող այլ իրավական ակտերով:

ԲԱԺԻՆ II. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Լանդշաֆտային ռազմավարության հիմնական նպատակն է՝ Հայաստանում ապրելու համար բարենպաստ, հարմարավետ, վիզուալ (տեսողական) աղտոտումից զերծ և էսթետիկական տեսանկյունից արժեքավոր կենսոլորտի ձևավորումը:

5. Տեսողական (վիզուալ) աղտոտում

1) Միջազգային փորձագիտական շրջանակներում ներկայումս բավականաչափ լայն կիրառում ստացած << տեսողական (վիզուալ) աղտոտում>> հասկացությունն օգտագործվում է որպես միջավայրի անհրապույր, աններդաշնակ կամ անբարեկարգ տարրերով լանդշաֆտի ընկալման խաթարումը: Դրանք բազմաբնույթ են և կարող են լինել ինչպես ցածրաճաշակ՝ գեղագիտական չափանիշներին չհամապատասխանող դիզայնով կամ կիսաքանդ ու չշահագործվող կառույցներ, այնպես էլ անբարեկարգ ճանապարհներ ու մայթեր, գովազդային վահանակներ և հայտարարություններ, աղբակույտեր և այլն.
2) վիզուալ աղտոտման ներազդեցությունը մարդու հոգեբանական վիճակի վրա գնահատվում է որպես էսթետիկական բնույթի գործոն և համարվում ոչ պակաս վտանգավոր, քան շրջակա միջավայրի աղտոտման այլ տեսակները: Առօրյա կայնքում տեսողական աղտոտումից առաջացող ընկճվածության արդյունքում մարդը մշտապես գտնվում է հոգեբանական անհարմարավետության (դիսկոմֆորտի) վիճակում, ինչը բացասաբար է անդրադառնում մարդու տրամադրության և առողջության վրա: Այս առումով, բարենպաստ և անվտանգ կենսոլորտի ձևավորման կարևոր բաղադրիչներից է նաև վիզուալ անաղատությունը, որին հասնելու համար անհրաժեշտ է միավորել ինչպես մասնագիտական ներուժը, այնպես էլ տարածքներն օգտագործողների ջանքերը.
3) չի կարելի թերագնահատել նաև լանդշաֆտի ներգործությունը մարդու մենթալիտետի, արժեքային համակարգի ձևավորման և աշխարհընկալման վրա: Ուստի ուսուցման, կրթության, իրազեկվածության լանդշաֆտային խնդիրները կարևոր նշանակություն ունեն լանդշաֆտային ռազմավարության նպատակներին հասնելու տեսանկյունից:

7. Հայաստանի տարածական զարգացման առանձնահատկությունները

1) Հայաստանի տարածքը բարձրադիր է, 44%-ը բարձր լեռնային, բնակեցման համար ոչ պիտանի: Տարաբնակեցման համակարգը միակենտրոն է՝ ձևավորված մայրաքաղաքի շուրջ: 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի բնակչությունը կազմում էր 3 800 000.0 մարդ, որից քաղաքայինը՝ 2 529 000, գյուղականը՝ 1 271 000: Տարածքների յուրացվածության աստիճանը խիստ անհամաչափ է: Սահմանային գոտին կազմում է ՀՀ տարածքի մոտ 24.0%-ը: Այն ձգվում է 9 մարզերի տարածքով՝ 1431 կմ երկարությամբ, սահմանային շերտը կազմում է 1431.0 քկմ, սահմանային գոտին 7155 քկմ: Սահմանամերձ տարածաշրջաններում և սահմանամերձ գոտում ընդգրկված են 9 քաղաքային և 245 գյուղական համայնքներ, բնակչությունը կազմում է 485 400 մարդ՝ սահմանամերձ 9 մարզերի բնակչության 18%-ը.

2) ինտենսիվ յուրացված գոտիները կազմում են Հայաստանի տարածքի 18.2%-ը,որտեղ կենտրոնացված է բնակչության 87.7 %-ը, իսկ քաղաքային բնակչության 98.6 %-ը, բնակչության խտությունը մի քանի անգամ գերազանցում է խտության էկոլոգիական շեմային չափանիշները (200 մարդ/քկմ), հիմնականում հասնելով 480-558 մարդ/քկմ: Թույլ յուրացված գոտիները կազմում են տարածքի 38.0 %-ը, որտեղ բնակվում է բնակչության ընդամենը 12.3 %-ը, բնակչության խտությունը շատ ցածր է՝ 11-20 մարդ/քկմ: Ճանապարհները կենտրոնացված են մայրաքաղաքի շրջակայքում, որտեղ դրանց խտությունը մի քանի անգամ ավելին է քան ծայրամասերում.

3) Երկրի տարածական զարգացման խնդիրները սերտորեն փոխկապակցված են լանդշաֆտի կազմակերպման հիմնահարցերի հետ և մեկը մյուսի արդյունք են: Անհամաչափ զարգացում ունեցող ինչպես ինտենսիվ, այնպես էլ թույլ յուրացված

տարածքներում կարող են առանձնացնել մի շարք առավելություններ (ուժեղ կողմեր) որոնք կարող են դրվել հավասարակշռված տարաբնակեցման համակարգի հիմքում: Հաշվի առնելով նաև յուրաքանչյուր տարածաշրջանին բնորոշող հատկությունները, պատմականորեն ձևավորված միջավայրը և ավանդույթները՝ անհրաժեշտ է գնահատել այն ներուժը, որը կխթանի զարգացման ցանկալի սցենարը.

4) ինտենսիվ յուրացված տարածքներն ապահովված են ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքով, այստեղ առավել մատչելի են հանրային ծառայությունները, ավելի մեծ են մարդկային ռեսուրսները և ֆինանսական հնարավորությունները: Միևնույն ժամանակ, թույլ յուրացված տարածքները հարուստ են բնական ռեսուրսներով, այնտեղ պահպանվել են բնության անձեռակերտ հատվածները, գեղեցիկ բնապատկերները, մաքուր ջուրը, օդը և սննդամթերքը.

5) տարածական զարգացման անհամաչափությունները արտացոլում են նաև երկրի լանդշաֆտների որակական հատկանիշները: Մասնավորապես, կառուցապատման աճող խտությունը, մասնատված և տարաբնույթ շինություններով ընդհատված հանրային օգտագործման կանաչ տարածքներն այլևս չեն ապահովում դրանց վերապահված բնական միկրոկլիմայի ստեղծման դերակատարությունը՝ մեծապես ձևավորելով մայրաքաղաքի գերուրբանիզացված քաղաքաշինական պատկերը.

6) հեռանալով մայրաքաղաքից, լանդշաֆտային համայնապատկերները փոխվում են, հաջորդվելով գրեթե ամբողջովին դեգրադացված անխնամ և անհրապույր մերձքաղաքային տեսարանները, աստիճանաբար լանդշաֆտները մեղմանում են, մաքրվելով սակավ ֆինանսական և ճարտարապետական միջոցներով իրականացված կառույցներից, բացվում են լեռնային շղթաները, դաշտավայրերը, գյուղատնտեսական հողակտորները, անտառներով պատված լեռնալանջերը.

7) քաղաքային այլ բնակավայրերում՝ որոշ բացառություններով, հիմնականում գերակայում է գորշ և անդեմ <<տիպային>> կառուցապատումը: Տարիների ընթացքում բազմաբնակարան շենքերի բնակիչները՝ հարմարեցնելով բնակարանները իրենց անհատական կարիքներին և ապրելակերպին, ձևափոխել են դրանք, զգալի վնասներ հասցնելով առանց այդ էլ անշուք ճարտարապետական լուծումներին.

8) առկա միջավայրային թերությունների հաղթահարման առումով որոշիչ գործոն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության կարևոր գերակայություններից՝ տարածքային համաչափ զարգացման քաղաքականությունը, որը մեր երկրի կայուն զարգացման երաշխիքներից է:

8. Կայուն տարածական զարգացում

1) Համաչափ տարածքային զարգացման նպատակների իրագործումը, բազմակենտրոն համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծումը մեծապես պայմանավորված է առկա տարածաշրջանային առանձնահատկությունների ուժեղ կողմերի հավուր պատշաճի գնահատմամբ և դրանց զարգացման միջոցառումների հետևողական իրականացմամբ.
2) տարածքային անհամաչափ զարգացման հաղթահարման նպատակային ուղղությունների թվում կարևորվում են երկրի տարածական կազմակերպման կատարելագործմանը, քաղաքաշինական պլանավորման հիմունքներով տարածաշրջանների և բնակավայրերի զարգացմանը, բնակչության համար անվտանգ և բարեկեցիկ կենսամիջավայրի ապահովմանը, ազգային ճարտարապետական առանձնահատկությունների և պատմական արժեքների պահպանմանը, ինչպես նաև ներդրումների համար գրավչության բարձրացմանը նպատակաուղղված գործողությունները.
3) կայուն տարածական զարգացման հիմնական նախադրյալն է՝ տնտեսական, բնապահպանական, սոցիալական և մշակութային բաղադրիչների ներդաշնակ և փոխկապակցված զարգացումը (<<Եվրոպական մայրացամաքի կայուն տարածական

զարգացման ուղենիշային սկզբունքներ>>, <<Կայուն զարգացման տարածական չափման մասին հռչակագիր>>): Միայն նշված բաղադրիչների միասնական դիտարկումն ու համատեղ գործարկումը կարող են ստեղծել այն անհրաժեշտ նախադրյալները, որ պարտադիր են բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման համար.

4) տարածաշրջանների և համայնքների համաչափ զարգացման նախադրյալների ստեղծմանն է ուղղված տարածական պլանավորման գործիքակազմը, որի միջոցով հնարավոր է դառնում ապահովել անցումը դեպի կայուն զարգացում: Առնչվելով բազմաթիվ բնագավառների հիմնախնդիրներին, տարածական պլանավորումը կոչված է հավասարակշռելու պետական, հասարակական և մասնավոր շահերը, և փոխհամաձայնեցնելով դրանք պլանավորում է ներկա և գալիք սերունդների համար ցանկալի կենսամիջավայրի ստեղծման հիմքերը:

ԲԱԺԻՆ III. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

9. Նոր գաղափարախոսություն կրող հասարակություն

1) Կոնվենցիայի փիլիսոփայությունը սահմանում է լանդշաֆտը, որպես համընդհանուր տարածք – կենսագործունեության միջավայր, որի բարեկեցությունը և որակը հասարակության և առանձին անհատների կյանքի որակի հիմքն են: Այդ իմաստով հավասարապես կարևոր են ինչպես բնական և պատմամշակութային, այնպես էլ՝ սովորական քաղաքային, գյուղական և մերձքաղաքային լանդշաֆտները.

2) քաղաքակրթության զարգացումը և նոր տեխնոլոգիաների կիրառումը դժվարեցրել են բնական լանդշաֆտների առանձնացումն իրենց մաքուր տեսակի մեջ: Արդի լանդշաֆտների որակական բնութագրերն առավելապես բնական և անտրոպոգեն գործոնների փոխազդեցության արդյունք են.

3) լանդշաֆտի վրա անտրոպոգեն ազդեցությունը կարող է լինել ապակառուցողական, կայունացնող կամ կառուցողական: Լանդշաֆտի վրա ապակառուցողական ազդեցությունը մարդու կողմից ընկալվում է տեսողական մակարդակով՝ որպես լանդշաֆտի վիզուալ աղտոտում.

4) ուրբանիզացման շարունակական ընթացքը մարդկանց մոտ անխուսափելիորեն ծնում է նոր ձգտումներ ու գերակայություններ: Աստիճանաբար բարձրանում է այնպիսի գործոնների դերը, ինչպիսիք են առօրյա քաղաքային կյանքում կենդանի բնության հետ առնչվելու գենետիկական պահանջը, հարմարավետ և արժանապատիվ կենսամիջավայր ունենալու ինտելեկտուալ և հոգևոր բավարարվածության ձգտումները.

5) հանրության ակնկալիքները բավարարելու համար հարկ է նկատի ունենալ, որ ապագայի կենսամիջավայրի (կամ լանդշաֆտների) ցանկալի որակին հասնելու նախադրյալները մեծապես կախված են ներկա սերնդի մտածելակերպից, արժեքների համակարգից և ապագա սերունդների նկատմամբ պատասխանատվության զգացումից.

6) լանդշաֆտները՝ լինելով գլոբալ և համընդհանուր արժեք, միևնույն ժամանակ, ստեղծվում են առանձին փոքր և մեծ մասշտաբի գործողություններով և ցանկացած գործողություն վաղ թե ուշ անդրադառնում է շրջակա միջավայրի որակի վրա՝ դրական կամ բացասական ազդեցությունների տեսքով:

10. Լանդշաֆտային գործողություններ

1) Լանդշաֆտների երեք՝ յուրահատուկ, սովորական և դեգրադացված տեսակներն էլ պահանջում են մարդու կողմից որոշակի միջամտություն. գործողություններ, որոնք Կոնվենցիայում սահմանված են որպես լանդշաֆտների պահպանություն, կառավարում և պլանավորում.

2) տեսականորեն՝ պահպանության գործողություններն առավելապես վերաբերում են արժեքավոր լանդշաֆտներին, կառավարումը՝ բոլոր տեսակի փոփոխություններին, պլանավորումը՝ նոր լանդշաֆտների ստեղծմանը: Սակայն իրականում ամեն ինչ փոխկապակցված է և պահանջում է հավասարակշռված և համալիր մոտեցումներ.

3) լանդշաֆտների հետ կապված գործունեությունը – նույն տարածքի վրա ուղղված պահպանության, կառավարման և պլանավորման միավորված գործողություններ են, քանի որ տարածքի մի մասը պահպանության կարիք ունի՝ այդ պահպանությունն ապահովելու, ինչպես նաև ժամանակի ընթացքում անխուսափելի փոփոխությունների շրջանակները սահմանափակելու և մնացած տարածքն առողջացնելու և բարելավելու համար անհրաժեշտ են կառավարման գործողություններ: Միևնույն ժամանակ, որպեսզի առկա լանդշաֆտների փոփոխություններն և նորերի ստեղծումը լինեն կանխատեսելի՝ անհրաժեշտ են գործողություններ պլանավորման ուղղությամբ:

4) լանդշաֆտների դասակարգումը՝ ըստ որակի և բնորոշ հատկությունների, ինչպես նաև պահպանության, կառավարման և պլանավորման միավորված գործողություններն արտահայտող գծապատկերը բերված է գծապատկերում:

11. Լանդշաֆտների պահպանություն

1) Ազգային, ռեգիոնալ և տեղական մակարդակներում <<լանդշաֆտների պահպանություն>> գործողությունները հիմնականում ամրագրված են օրենսդրորեն: Դա պատմամշակութային անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի, բնության հատուկ պահպանվող տարածքների, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության վերաբերյալ օրենսդրությունն է.

2) լանդշաֆտների պահպանությունը ենթադրում է տարածքի էական և յուրահատուկ բնութագրերի պահպանումը, ժամանակի ընթացքում անխուսափելի փոփոխությունների համար ընդունելի շրջանակների սահմանումը և այդ փոփոխությունների կառավարումը, ինչպես նաև պահպանվող տարածքից դուրս գտնվող, սակայն դրանց ձևափոխող պատճառների վրա ազդեցության մեխանիզմների մշակումը.

3) պահպանության գործողությունների հաջողությունը պայմանավորվում է ոչ միայն օգտագործման հետ կապված ռեժիմների և/կամ տարածքների պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացմամբ, այլև անտրոպոգեն ճնշումների հարակից տարածքներում վերաբաշխմանը և վերահասցեագրմանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացմամբ:

12. Լանդշաֆտների կառավարում

1) <<Լանդշաֆտների կառավարումը>> շրջակա միջավայրի վրա ազդող և լանդշաֆտները ձևափոխող երևույթների, պատճառների և իրավիճակների կարգավորմանն ուղղված գործողություն է: Կառավարման խնդիրը կայանում է լանդշաֆտների փոփոխություններին հանգեցնող ցանկացած գործունեության վրա ազդեցության լծակներ ունենալուն, ընդ որում՝ գործողությունը հավասարապես վերաբերում է ինչպես դրական, այնպես էլ բացասական փոփոխություններին.

2) <<Լանդշաֆտների կառավարումը>> կարելի է դիտարկել որպես հասարակական կյանքի փոփոխություններին արձագանքող օպերատիվ և դինամիկ պլանավորման ձև: Այն կարող է իրականացվել որպես սոցիալական ձգտումները, բնական և մշակութային առանձնահատկությունները, կանխատեսելի փոփոխություններն ու բնական ռեսուրսների օգտագործման թույլատրելիությունը հաշվի առնող տարածքային զարգացման պլան.

3) կառավարման որոշակի մեխանիզմ է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորումը՝ տարածքի նկատմամբ հատուկ կանոնների և պլանավորման ուղղությամբ պարտադիր գործողությունների սահմանման միջոցով:

13. Լանդշաֆտների պլանավորում

1) <<Լանդշաֆտների պլանավորումը>> հաստատուն գործողություն է, ուղղված լանդշաֆտների հեռանկարային զարգացման, վերականգնման, կազմավորման (ստեղծման) կանխորոշմանը: Ըստ էության դա նույնն է, ինչ տարածական/տարածքային պլանավորումը, որը, հաշվի առնելով տնտեսական և բնական գործընթացները, նախատեսելով սոցիալական պահանջների զարգացումները՝ կոչված է պլանավորելու լանդշաֆտների այնպիսի փոփոխություններ, որոնք կբավարարեն հասարակության պահանջները և միաժամանակ, համատեղելի լինեն կայուն զարգացման նպատակներին.

2) լանդշաֆտների պլանավորումը կարելի է դիտարկել որպես տարածական պլանավորման փաստաթղթերի կազմում ներառված առանձին բաժին կամ ինքնուրույն նախագիծ.

3) լանդշաֆտային պլանավորումը, ինչպես և տարածական պլանավորման փաստաթղթերը, պետք է ունենա հիերարխիկ կառուցվածք և մշակման մի քանի մակարդակ՝ լանդշաֆտային ծրագիր (Մ1:100 000; Մ1:50 000), շրջանակային լանդշաֆտային հատակագիծ (Մ1:10 000; Մ1: 5 000), լանդշաֆտային հատակագիծ (Մ1:2 000; Մ1: 1 000), կանաչապատման և բարեկարգման նախագծեր (Մ1:500; Մ1:200).

4) պլանավորման առարկա են նաև առողջացման բնական ներուժը կորցրած արտադրական և կենցաղային թափոններով աղտոտված հողամասերը, լքված արտադրական ձեռնարկությունների տարածքները, արդյունահանման հետևանքով սպառված և լքված հանքավայրերը, բուսականությունից զուրկ, քամու և էրոզիայի ազդեցության տակ քայքայված լեռնալանջերը, - տարածքներ, որոնք առանց մարդու կողմից նպատակային դրական միջամտության երկար տարիների ընթացքում չեն վերականգնվի և, փաստորեն, կորցված կլինեն նաև ապագա սերունդների համար.

5) նպատակահարմար է սահմանել լանդշաֆտային նախագծերի և ուսումնասիրությունների արդիականացման կամ վերանայման ժամկետները, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են առնչվող տարածքների փոփոխությունների արագությունը, հասարակության զգայունությունը կոնկրետ խնդիրների նկատմամբ, լանդշաֆտների որակն ու ներուժը՝ դիտարկելով դրանք կայուն զարգացման ապահովման տեսանկյունից:

14. Լանդշաֆտի որակի սահմանված նպատակ

1) Լանդշաֆտի որակի նպատակը՝ տեղանքի ուսումնասիրման, իդենտիֆիկացման և գնահատման հիման վրա ձևավորված տեսլական է: Ըստ էության՝ դա այն ակնկալվող արդյունքն է, կամ տեղանքի ապագայի մասին այն պատկերացումներն են, որ դրվում են գիտելիքի և հասարակական կարծիքի հիման վրա ձևավորված լանդշաֆտային գործողությունների հիմքում.

2) ցանկացած տարածքում հնարավոր է առանձնացնել այդ տարածքին յուրահատուկ իմաստ հաղորդող բնորոշող տարրեր, որոնք արտահայտում են տեղանքի բնական կամ պատմական զարգացումները և/կամ հատկանշական են տեղաբնակների պատմական հիշողության տեսանկյունից.

3) լանդշաֆտի որակի նպատակին հասնելու համար կարող են կիրառվել տարբեր գործիքներ: Դրանք կարող են ներառել ինչպես իրավական կանոնակարգման ձևերը, այնպես էլ սեփականատերերի և օգտագործողների հետ պահպանության, կանաչապատման, վերափոխման, վերակառուցման և վերանորոգման պայմանագրերով նման գործողությունները խթանող մեխանիզմների ամրագրումը.

4) լանդշաֆտների պլանավորման հետ առնչվող քաղաքաշինության խնդիրները պետք է դասակարգվեն, ելնելով տարածքների առանձնահատկություններից, ինչպես նաև կարող են նաև առանձնացվել որպես լանդշաֆտի հատուկ ուսումնասիրությունների և նախագծման թեմաներ, մասնավորապես՝ քաղաքային մոտեցումներ, քաղաք-գյուղ սահմաններ, քաղաքային արվարձաններ և տարածքներ, գծային կապեր տարբեր բնակավայրերի միջև (եզրային զարգացումներ) և այլն.

5) լանդշաֆտների որակի կարևոր չափանիշ է հասարակության համար մատչելիության պայմանը: Մի կողմից անհրաժեշտ է, որ երաշխավորված լինի մասնավոր սեփականության իրավունքը, մյուս կողմից անհրաժեշտ է նաև ապահովել հանրության համար լանդշաֆտի վայելումը՝ նախատեսելով, մասնավորապես, հարմար մոտեցումներ ու երթևեկության ճանապարհներ, կայաններ և այլն.

6) լանդշաֆտի որակի նպատակը պետք է սահմանվի լանդշաֆտային քաղաքականության ընդհանուր գործիքներով՝ տարբեր մակարդակների համար (ազգային, ռեգիոնալ, տեղական) և ներառվի բնակավայրերի, տարածաշրջանների և երկրի տարածական պլանավորման և զարգացման փաստաթղթերում, ինչպես նաև սեկտորային գործիքներով՝ ներառվելով ոլորտային զարգացման և նպատակային ծրագրերում.

7) նպատակները պետք է սահմանեն նախնական գերակա ուղղությունները և դրանց համապատասխան այն միջոցառումները, որոնք ձեռնարկվելու են լանդշաֆտը պահպանելու, կառավարելու, պլանավորելու և ժամանակ առ ժամանակ այն վերանայելու նպատակով:

15. Գիտելիքի վրա հիմնված լանդշաֆտային գործողություններ

1) Լանդշաֆտների մասին գիտելիքի ձեռքբերումն առնչվում է լանդշաֆտների իդենտիֆիկացման, նկարագրման ու գնահատման գործողություններին.

2) լանդշաֆտները պետք է վերլուծվեն բնական, երկրաբանական, հնագիտական, պատմական, և մշակութային առանձնահատկությունների, դրանց փոխկապակցվածության և փոփոխությունների պատճառների տեսանկյունից: Կարևոր է նաև վերլուծել հասարակության կողմից լանդշաֆտի ընկալումը, ինչպես պատմական զարգացումների, այնպես էլ արդի նշանակության տեսանկյունից.

3) լանդշաֆտների մասին գիտելիքն այն հիմքն է, որը ձևավորում է քաղաքականության գերակայությունները, ինչպես նաև որոշում է լանդշաֆտների վրա ազդեցություն ունեցող շահագրգիռ կողմերի ներգրավվածության շրջանակները.

4) ինչպես նախատեսված է Կոնվենցիայի 5-րդ հոդվածով, շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ, լանդշաֆտների մասին գիտելիքների ձեռքբերման նպատակով անհրաժեշտ է.

ա. իրականացնել ամբողջ տարածքում լանդշաֆտների իդենտիֆիկացումը, վերլուծել դրանց հատկություններն ու դրանք ձևափոխող ուժերն ու գործոնները, նկատի առնել փոփոխությունները,

բ. գնահատել իդենտիֆիկացված լանդշաֆտը՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի և բնակչության կողմից առանձնացված արժեքները,

գ. ուղեկցել գործընթացները փորձի և մեթոդաբանության փոխանակությամբ, Եվրոպայի մակարդակով կազմակերպվող սեմինարների և հանդիպումների միջոցով /Կոնվենցիայի 8-րդ հոդված/.

5) լանդշաֆտների մասին գիտելիքի ձեռքբերումը պահանջում է բազմաճյուղ /մուլտիդիսցիպլինար/ պատասխաններ որոշակի տարածքի և ժամանակահատվածի համար: <<Իդենտիֆիկացում>> գործողությունը ներառում է իր մեջ նաև լանդշաֆտի առանձնահատկությունների արժևորումը, և, միևնույն ժամանակ, փոխկապակցված է տարածքի ապագայի տեսլականի, այսինքն՝ լանդշաֆտի որակի նպատակի հետ:

16.Լանդշաֆտների ուսումնասիրություն, գնահատում, իդենտիֆիկացում

1) Լանդշաֆտների <<նկարագրում-գնահատում-իդենտիֆիկացում>> գործողությունը նպատակահարմար է իրականացնել (և որոշ չափով ներկայումս իրականացվում է) տարածքային փոփոխությունների կառավարման գործիքներով՝ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման միջոցով (տարածքային հատակագծման նախագծեր, գլխավոր հատակագծեր և գոտևորման նախագծեր, գործառնական տարածքների հատակագծեր, լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգերի տարածքային կազմակերպման, արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման նախագծեր).

2) տարածքի առկա իրավիճակի ուսումնասիրությունը, վերլուծությունը և համալիր գնահատականը, տարածքի հեռանկարային զարգացումը (որակյալ լանդշաֆտներ ունենակու տեսլականը), դրան հասնելու համար պահպանության, կառավարման և պլանավորման գործողությունների համակարգը կազմում են տարածական պլանավորման հիմքը.

3) տարածական պլանավորման փաստաթղթերի մասն են կազմում լանդշաֆտների կազմակերպման համալիր խնդիրները՝ արժեքավոր լանդշաֆտների պահպանությանը և դեգրադացված լանդշաֆտների բարելավմանն ուղղված միջոցառումների ներառմամբ.

4) լանդշաֆտային բաղադրիչն առկա է բոլոր մակարդակների (ազգային, տարածքային և տեղական) տարածական պլանավորման փաստաթղթերում: Համալիր վերլուծության ու գնահատականի առարկա են հանդիսանում բնական և մարդածին /քաղաքաշինական/ լանդշաֆտների բոլոր հիմնական բաղադրիչները: Այդ թվում՝

ա. բնական՝ բնակլիմայական պայմաններ, ռելիեֆ, հողային ծածկույթ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն, օգտակար հանածոների պաշարներ, վտանգավոր բնական երևույթներ, ինժեներաերկրաբանական պայմաններ,

բ. քաղաքաշինական՝ բնակավայրեր, գործառնական տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, բնապատմական ժառանգության օբյեկտներ, բնակավայրերի բաց տարածքներ (հրապարակներ, հասարակական կենտրոններ, դենդրոպարկեր, զբոսայգիներ, պուրակներ), ինժեներատրանսպորտային ենթակառուցվածք և այլն.

5) լանդշաֆտների մասին գիտելիքի ձեռքբերումը պետք է դառնա ուսուցողական, կրթական և որակավորման ծրագրերի, ինչպես նաև լանդշաֆտների խնդիրներին առնչվող ոլորտներում իրականացվող գիտական (մագիստրոսական, ատենախոսական, դոկտորական) աշխատությունների առարկա: Գիտական ուսումնասիրություններն ունեն լավագույն հնարավորություններ լանդշաֆտները ձևափոխող ուժերը բացահայտելու, ապագայի համար կանխատեսումներ անելու և առաջարկվող լուծումները հաշվարկային և փորձնական ճանապարհով ստուգելու համար.

6) լանդշաֆտային ուսումնասիրությունների արդյունքների հրատարակումը և տարածումը կարող է ապահովել ծանոթագրական նյութերի մեծ բազմազանություն, նպաստելով

հանրության իրազեկության բարձրացմանը, հաղորդակցության միասնական լեզվի ձևավորմանը, ինչպես նաև լանդշաֆտներին վերաբերող վերլուծական, տեղեկատվական, քարտեզագրական, լուսանկարչական և այլ նյութերի բազաների ստեղծմանը.

7) լանդշաֆտային քաղաքականության իրագործման գործողություններում անհրաժեշտ է ապահովել նաև հանրության ներգրավվածությունը՝ մասնակցությանը վերաբերող ընթացակարգերը գործնականում արդյունավետ կիրառելու միջոցով.

8) բնակչությունն ունի փորձարարական գիտելիքներ, որոնք կարող են օգտակար լինել գիտական ուսումնասիրությունների համար և հիմնավորել դրանք: Մասնակցության պահանջն ապահովում է լանդշաֆտների սոցիալական ընկալման և բնակչության ձգտումների հաշվառումը լանդշաֆտների պահպանության, կառավարման և պլանավորման գերակայությունների նախանշման հարցում.

9) ուսուցման, կրթության, իրազեկության բարձրացման, ինչպես նաև հասարակության ներգրավմանը նպատակաուղղված քաղաքականության հիմնադրույթներն ամրագրված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի <<Հայաստանի Հարնապետության լանդշաֆտային քաղաքականության իրագործման հիմնադրույթներին հավանություն տալու մասին>> N 45 արձանագրային որոշմամբ:

Գծապատկեր

ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ՈՐԱԿԻ ԵՎ ԲՆՈՐՈՇՈՂ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Արժեքավոր՝ Պատմամշակութային հուշարձաններ և պատմական միջավայր, բնության հատուկ պահպանվող տարածքներ, գեղատեսիլ բնապատկերներ
ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
Սովորական Առօրյա՝ Քաղաքային, գյուղական, մերձքաղաքային միջավայր, զբոսայգիներ և պուրակներ, փողոցներ և ճանապարհներ, մշակված գյուղատնտեսական հողեր և այգիներ
Լքված Դեգրադացված՝ Լքված արտադրական տարածքներ, չմշակվող գյուղատնտեսական հողեր, արտադրական և կենցաղային թափոններով աղտոտված տարածքներ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թ. հուլիսի 19-ի նիստի N 29
արձանագրային որոշման

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

	Ընդհանուր նպատակ և Հատուկ նպատակներ	Առաջնահերթ միջոցառումներ	Միջնաժամկետ միջոցառումներ			Պատասխանատու մարմին	Համակատարող մարմին/ներ
1	**Կայուն տարածական զարգացման նախադրյալների ստեղծում**	**2013**	**2014**	**2015**	**2016**		
	1.1. * Տարածական պլանավորում (ազգային մակարդակ)		Տարաբնակեցման գլխավոր նախագծի իրագործման մշտադիտարկում	Տարաբնակեցման գլխավոր նախագծի լրամշակում, այդ թվում՝ լանդշաֆտային խնդիրների հստակեցման մասով	Տարաբնակեցման գլխավոր նախագծի հաստատման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	
	1.2. Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման և մոնիտորինգի անցկացման կարգի լրամշակում՝ լանդշաֆտային		ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման և մոնիտորինգի			ՀՀ քաղաքաշինության նախարարություն	

	խնդիրների հստակեցման մասով		անցկացման կարգը հաստատելու մասին>> N2164-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը				
	1.3. * ՀՀ մարզերի տարածքային հատակագծման նախագծերի մշակում (ռեգիոնալ մակարդակ)՝		Տարածքային հատակագծման նարագծերի մշակում (ՀՀ Տավուշի, Սյունիքի մարզեր)	Տարածքային հատակագծման նարագծերի մշակում /ՀՀ Լոռու, Կոտայքի, Արագածոտնի մարզեր/	Տարածքային հատակագծման նարագծերի մշակում /ՀՀ Արմավիրի, Արարատի մարզեր/	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ համապատասխան մարզպետներ
	1.4. Տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի լրամշակում՝ լանդշաֆտային խնդիրների հստակեցման մասով		ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի <<Տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին>> N997-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և			ՀՀ քաղաքաշինության նախարարություն	

			ներկայացնում ՀՀ կառավարության քննարկմանը				
	1.5. Համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետու-թյան կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշման համապատասխան	Համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքների համակարգում	Համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքների համակարգում	Համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքների համակարգում	Համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքների համակարգում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն Համապատասխան համայնքների ղեկավարներ (համաձայնությամբ)	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով
	1.6. * ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի	Ջերմուկի գլխավոր հատակագծի և				ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

	«Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու, գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» N 501-Ն որոշման համապատասխան՝ ՀՀ Վայոց Ձորի Ջերմուկի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի՝ սպորտի և տուրիզմի կենտրոնի զարգացման ծրագրի և լանդշաֆտային խնդիրների ներառմամբ լրամշակման աշխատանքների համակարգում	գոտիավորման նախագծի հաստատման գործընթացի համակարգում					ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով, Ջերմուկի քաղաքային համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
	1.7. * ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի	«Տաթև» վանական համալիրի կառուցապատման կանոնակարգման և լանդշաֆտի պահպանական				ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ վարչապետի 2011 թ. դեկտ 23-ի N1255-Ա որոշմամբ ստեղծված

	պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու, գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» N 501-Ն որոշման համապատասխան՝ ՀՀ Սյունիքի մարզի <<Տաթև>> վանական համալիրի պահպանական գոտու կառուցապատման սխեմայի և էսքիզային փաստաթղթերի մշակման աշխատանքների համակարգում	գոտիների քաղաքաշինական փաստաթղթերի հաստատման գործընթացի համակարգում					<<Տաթև>> զբոսաշրջային կենտրոնի քաղաքաշինական խնդիրների համակարգման միջգերատեսչական հանձնաժողով Տաթևի գյուղական համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
2	Ապահովել լանդշաֆտների պահպանությունը, կառավարումը և պլանավորումը	**2013**	**2014**	**2015**	**2016**		

	2.1. * Առանձնացնել, նկարագրել և պահպանել արժեքավոր լանդշաֆտները		Պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների սահմանների ճշգրտում և պահպանական ռեժիմների սահմանում	Պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների սահմանների ճշգրտում և պահպանական ռեժիմների սահմանում	Պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների սահմանների ճշգրտում և պահպանական ռեժիմների սահմանում	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով
			Բնության հուշարձանների պահպանական գոտիների սահմանների ճշգրտում և պահպանական ռեժիմների սահմանում	Բնության հուշարձանների պահպանական գոտիների մշակում և պահպանության ռեժիմների սահմանում	Բնության հուշարձանների պահպանական գոտիների մշակում և պահպանության ռեժիմների սահմանում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված համակարգող միջգերատեսչական հանձնաժողով
	2.2. * Արժեքավոր լանդշաֆտների պահպանությանը և վերականգնմանն ուղղված գործողություններ		Հուշարձանների վերականգնման և տարածքների բարեկարգման ծրագրերի իրականացում	Հուշարձանների վերականգնման և տարածքների բարեկարգման ծրագրերի իրականացում	Հուշարձանների վերականգնման և տարածքների բարեկարգման ծրագրերի իրականացում	ՀՀ մշակույթի նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով
	2.3. * Վերականգնել դեգրադացված տարածքները			Բնակավայրերի դեգրադացված տարածքների վերակառուցման և բարեկարգման վերաբերյալ առաջարկությունների և/կամ ծրագրերի մշակում և իրականացում	Բնակավայրերի դեգրադացված տարածքների վերակառուցման և բարեկարգման վերաբերյալ առաջարկությունների և/կամ ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) Համապատասխան մարզպետներ ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով
	2.4. * Համայնքների գլխավոր			Լքված արտադրական տարածքների	Լքված արտադրական տարածքների	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Համայնքային բյուջե (համապատասխան

	հատակագծերով և գոտևորման նախագծերով նախատեսված դեգրադացված և անօգտագործելի տարածքների վերազարգացում			վերակառուցման և վերազարգացման ծրագրերի մշակում և իրականացում	վերակառուցման և վերազարգացման ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ֆինանսական միջոցների առկայության դեպքում) ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով
3	**Սահմանել որակյալ լանդշաֆտի չափանիշներ**	**2013**	**2014**	**2015**	**2016**		
	3.1 . * Ստեղծել հատակագծմանը, նախագծմանը և շինարարությանը առնչվող ազգային նորմատիվներ և լանդշաֆտային խնդիրները պարզաբանող մեթոդաբանություն			Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման շինարարական նորմերի և կանոնների մշակում (1փուլ)	Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման շինարարական նորմերի և կանոնների մշակում (2փուլ)	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	
4	**Ձեռք բերել լանդշաֆտների մասին գիտելիք**	**2013**	**2014**	**2015**	**2016**		

	4.1. Կրթական համակարգի կատարելագործում՝		Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ ուսուցմանն ու կրթությանն առնչվող սկզբունքների ներառում	Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ ուսուցմանն ու կրթությանն առնչվող սկզբունքների ներառում	Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ ուսուցմանն ու կրթությանն առնչվող սկզբունքների ներառում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ԵՊՀ /համաձայնությամբ/ ԵՃՇՊՀ /համաձայնությամբ/	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով
	4.2. * Հայաստանի Հանրապետության լանդշաֆտների էլեկտրոնային քարտեզի ստեղծում և ՀՀ քաղաքաշինության նախարարության կայքում տեղադրում			Հայաստանի Հանրապետության լանդշաֆտների էլեկտրոնային քարտեզի ստեղծման նպատակով նյութերի հավաքագրում և ՀՀ քաղաքաշինության նախարարության կայքում էլեկտրոնային քարտեզի տեղադրում	Հայաստանի Հանրապետության լանդշաֆտների էլեկտրոնային քարտեզի ստեղծման նպատակով նյութերի հավաքագրում և ՀՀ քաղաքաշինության նախարարության կայքում տեղադրված էլեկտրոնային քարտեզի համալրում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	
	4.3. * Լանդշաֆտների մասին տվյալների բանկի ստեղծում		Լանդշաֆտների մասին տեղեկատվության հավաքագրում և տվյալների բանկի ստեղծում	Լանդշաֆտների մասին տեղեկատվության հավաքագրում և տվյալների բանկի համալրում	Լանդշաֆտների մասին տեղեկատվության հավաքագրում և տվյալների բանկի համալրում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման մարմիններ Տեղական ինքնակառավարման մարմիններ /համաձայնությամբ/
	4.4. Իրականացնել լանդշաֆտների ուսումնասիրությունը, գնահատումը և		Ստանդարտացված ձևաչափի մշակում լանդշաֆտների գնահատման և			ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական

	իդենտիֆիկացումը		իդենտիֆիկացման համար				հանձնաժողով
5	**Բարձրացնել իրազեկվածության աստիճանը, ներգրավելով հասարակությունը լանդշաֆտային խնդիրների քննարկման և գործողությունների իրականացման մեջ**	**2013**	**2014**	**2015**	**2016**		
	5.1. * Ապահովել տեղեկատվության հանրամատչելիությունը		Ստեղծել լանդշաֆտային խնդիրները լուսաբանող կայք/կամ կայք էջ	Հրատարակել /կամ տեղադրել կայքէջում/ լանդշաֆտային տեղեկատու տարելան մեկ /երկու անգամ՝ ամփոփելով անցած ժամանակահատվածի լավագույն միջոցառումները և փորձը	Հրատարակել /կամ տեղադրել կայքէջում/ լանդշաֆտային տեղեկատու տարեկան մեկ /երկու անգամ՝ ամփոփելով անցած ժամանակահատվածի լավագույն միջոցառումները և փորձը	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով
	5.2. Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրականացման վերաբերյալ պարբերական զեկույցների կազմում	2012 թվականին կատարված միջոցառումների վերաբերյալ տարեկան զեկույցի կազմում և տեղադրում կայքէջում	2013 թվականին կատարված միջոցառումների վերաբերյալ տարեկան զեկույցի կազմում և տեղադրում կայքէջում	2014 թվականին կատարված միջոցառումների վերաբերյալ տարեկան զեկույցի կազմում և տեղադրում կայքէջում	2015 թվականին կատարված միջոցառումների վերաբերյալ տարեկան զեկույցի կազմում և տեղադրում կայքէջում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով
	5.3. * Լանդշադտային խնդիրների և Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի	Լանդշադտային խնդիրների քննարկմանը ուղղված սեմինարների կազմակերպում ՀՀ	Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի գաղափարախոսությունը ներկայացնող	<<Լանդշաֆտային ուղեցույց>> բուկլետի հրատարակում և տրամադրում համայնքներին:		ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական

	գաղափարախոսության մասին իրազեկվածության բարձրացում	քաղաքաշինության նախարարությունում կամ ՀՀ մարզերում	<<Լանդշաֆտային ուղեցույց>> բուկլետի մշակում և տեղադրում ՀՀ քաղաքաշինության նախարարության կայքէջում				հանձնաժողով
			Լանդշադտային խնդիրների քննարկմանը ուղղված սեմինարների կազմակերպում ՀՀ քաղաքաշինության նախարարությունում կամ ՀՀ մարզերում	Լանդշադտային խնդիրների քննարկմանը ուղղված սեմինարների կազմակերպում ՀՀ քաղաքաշինության նախարարությունում կամ ՀՀ մարզերում	Լանդշադտային խնդիրների քննարկմանը ուղղված սեմինարների կազմակերպում ՀՀ քաղաքաշինության նախարարությունում կամ ՀՀ մարզերում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով
6	Խրախուսել լավագույն լանդշաֆտային նախաձեռնությունները	**2013**	**2014**	**2015**	**2016**		
	6.1. * Հայաստանի Հանրապետության Լանդշաֆտի մրցանակի շնորհում՝ լավագույն նախաձեռնությունները և իրագործված ծրագրերը խրախուսելու և դրանց մասին հանրությանը իրազեկելու նպատակով	Լանդշաֆտի մրցանակի դիպլոմների և արձանիկների պատրաստում	2014 թվականի Լանդշաֆտային ազգային մրցանակի շնորհման գործընթացի մեկնարկ, հայտերի հավաքագրում և ուսումնասիրություն	2014 թվականի Լանդշաֆտային ազգային մրցանակի շնորհում	2016 թվականի Լանդշաֆտային ազգային մրցանակի շնորհման գործընթացի մեկնարկ, հայտերի հավաքագրում և ուսումնասիրություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն	ՀՀ վարչապետի 2009 թ. Հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով
		2013	2014	2015	2016		

Ծանոթություն ՝ <<... *>> աստղանիշով նշված միջոցառումների ֆինանսավորումը կատարվում է օրենսդրությամբ չարգելված միջոցների հաշվին